



Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



ՎԵՐԱՓՈՒՈՒՄԷՆ ԵՏԲ ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ

25 ՕԳՈՍՏՈՍ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ էջ 1
 «Ողորմութեան Կանչ Մը» (13) էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՌԱԿՆԵՐՈՒ ԳԻՐՔԷՆ (11.30-12.4)

Արդար գործերու վարձքը կեանք է. անօրէնները վաղահասօրէն պիտի կորսուին: Երբ արդարը հազիւ կը փրկուի, ի՛նչ պիտի ըլլայ ամբարիշտին ու մեղաւորին վիճակը:

Գիտութիւն
 սիրողը իր
 սխալները
 կ'ընդունի...

Գիտութիւն սիրողը իր սխալները կ'ընդունի. յանդիմանութիւն ատողը անմիտ է: Լաւ մարդուն՝ Տէրը շնորհք կու տայ, մինչ կը դատապարտէ չարամիտը: Չարութիւնը մնայուն յաջողութիւն չի բերեր, մինչ արդարներու արմատը ո՛չ ոք կրնայ շարժել: Առաքիւնի կին մը ամուսինին համար թագ է, մինչ անպատիւ կինը անոր ոսկորները կրծող խլիրդի կը նմանի:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՄ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (6.16-7.1)

Արդարեւ մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.
 «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց

հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:

Ահա թէ ինչո՛ւ Աստուած կը հրահանգէ մեզի.

«Անշատ եւ հեռու կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ, ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս եւ աղջիկներս պիտի ըլլաք, - կ'ըսէ ամենակալ Տէրը»:

Սիրելիներ, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ»:

... մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (1.39-56)

Նոյն օրերուն Մարիամ ճամբայ ելլելով աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով եղիսաբէթի ողջոյն տուաւ:

Երբ եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ եւ եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաճայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ

«Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն...»

որհնեալ է գաւակը որ կը կրես որովայնիդ

«Երանի՛
ֆեզի որ
հաւատացիր,
որովհետեւ
Աստուծոյ
կողմէ ֆեզի
ըսուածները
պիտի
կատարուին»:

մէջ: Ի՞նչ երջանկութիւն,
որ Տիրոջս մայրը ինծի
կ'այցելէ, որովհետեւ
երբ ողջոյնդ լսեցի,
երեխաս ուրախութեամբ
շարժեցաւ որովայնիս
մէջ: Երանի՛ քեզի որ
հաւատացիր, որովհետեւ
Աստուծոյ կողմէ քեզի

ըսուածները պիտի կատարուին»:

Մարիամ ըսաւ.

«Ինչպէ՛ս Տէրը գովաբանեմ. ահա
հոգիս կ'ուրախանայ Աստուծոմով, իմ
Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր
աղախիներն հեզութիւնը:

«... ան տեսաւ
իր աղախիներն
հեզութիւնը»:

Եւ ասկէ ետք բոլոր
ազգերը երանի պիտի
տան ինծի, քանի չգօրն
Աստուած ինծի համար

մեծամեծ գործեր կատարեց. Սուրբ է
անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ
ողորմութեամբ ան կը
նայի աստուածավախ

«... Բոլոր
ժամանակ-
ներուն մէջ
ողորմութեամբ
ան կը նայի
աստուածավախ
մարդոց վրայ»:

մարդոց վրայ: Իր
գօրաւոր բազուկով
ոչնչացուց հպարտ-
ները՝ իրենց բոլոր
խորհուրդներով:
Գահազրկեց հզօրները


եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները
բարիքներով լիացուց, մինչ հարուստ-

«Գահազրկեց
հզօրները եւ
բարձրացուց
խոնարհները»:

ները դատարկաձեռն
արձակեց: Պաշտպան
եղաւ իր ծառային՝
Իսրայէլի, որովհետեւ
յաւերժական ողորմու-

թիւն խոստացած էր մեր հայրերուն՝
Աբրահամի եւ անոր գաւակներուն»:

Մարիամ շուրջ երեք ամիս եղիսաբէթի
մօտ մնալէ ետք վերադարձաւ իր տունը:



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹԵԱՆ ԸԵԱԸՍԻՒ

ՀԵՌԵԱԿ՝ ՀԵՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹՎՈՒԳԱՆՈՒԹԻՒՄԻՆ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՆՈՒՏԵԱՆԻ

ՄԻԱԿԸ

Ով Տէր, քեզմէ զատ որո՞ւ կամ ինչի՞ կրնամ
տենչալ: Դուն Տէրս ես. Տէրը՝ սրտիս, մտքիս ու հո-
գիս: Ամբողջականօրէն կը նանչնաս զիս: Մէջդ
ու միջոցադ է որ ամէն ինչ կը գտնէ իր ծագումն
ու նպատակը: Կը գրկես ամէն գոյակ եւ կը հոգաս
անոր՝ աստուածային սիրով ու կարեկցանքով:
Ինչո՞ւ ուրեմն կը շարունակեմ քեզմէ դուրս
ակնկալել երջանկութիւն ու լիացում: Ինչո՞ւ կը
շարունակեմ յարաբերիչ հետդ՝ որպէս բազում
յարաբերութիւններէս մէկը, եւ ոչ թէ որպէս միակը,
որուն մէջ արմատ կ'արձակեն բոլոր միւսները:
Ինչո՞ւ կը շարունակեմ ժողովրդականութիւն,
յարգանք, յաջողութիւն, փառք ու հեշտասէր հա-
ճոյքներ փնտռել: Ինչո՞ւ, Տէր, այնքա՛ն դժուար է
քեզ ընդունիլ որպէս միակը: Ինչո՞ւ կը շարունակեմ
ընկրկիլ ինքզինքս ամբողջութեամբ քեզի յանձնել:

Օգնէ ինծի, ով Տէր, որ մեռնին հին անձս ու
հազարաւոր մեծ եւ փոքր հնարքները, որոնցմով
տակաւին իմ կեղծ անձս կը շինեմ, ու սուտ ցանկու-
թիւններուս կը փորձեմ կառչիլ: Տուր որ վերածնիմ
մէջդ եւ քու ընդմէջդ տեսնեմ աշխարհը՝ ճշմարիտ
կերպով, որպէսզի բոլոր արարքներս, բառերս,
մտածումս քեզի ուղղուած օրհներգ դառնան:

Սիրող շնորհքիդ պէտք ունիմ, ճամբորդելու հա-
մար այս դժուար ճանապարհով, որ կ'առաջնորդէ
հին անձիս մահուան եւ նոր կեանքի մը՝ մէջդ ու
քեզի նուիրում: Գիտեմ եւ վատահ եմ որ ասիկա
ազատութեան ճամբան է:

Տէր, փարստէ անվատստութիւնս եւ օգնէ ինծի
որ վատահեղի ընկեր մը դառնամ: Ամէն:

(Շարունակելի 13)